

եթէ լնձ համար էք պատերազմում, ինչ չէք բաց անում բերդի դուռը, որ ես էլ ներս մտնելով հեշտութեամբ կարողանանք վերջացնել պատերազմը, և ես վարձատրեմ ձեզ, ինձ համար պատերազմելու համար։ Եւ երբ բացին դուռը, Ծշոտի գօրքերը ներս մտան և մի ակնթարթում ձերբակալեցին Գուրգէնի գօրքը։ Եւ որովհետեւ նրանք կապանքների մէջն անգամ լուռ չէին կենում, և վաս էին խօսում Ծշոտի մասին, ուստի և Ծշոտ հրամայեց հանել նրանց աշբերն և կորել նրանց ականջներն ու դունչերը և այնպէս ա, ձակել Գուրգէնի մօտ։

Այսպիսով Ծշոտ Երկաթը նորից հպատակացրեց իրեն Գուրգէնին։

Սակայն այս ազատասէր երկիրը բոլորովին լընկճուեցաւ և կարճ միջոցից յեռոց, Ծշոտ Աղորմանի ժամանակ նորից անկախութիւն ձեռք բերեց և առանձին թագաւորութիւն կազմեց, կիւրիկեան հարաստութեամբ։

### ԿԻՒՐԻԿԵԱՆ ԹԱՂՄՈՒՈՐՈՒԹԻՒՆ

Կիւրիկեան թագաւորութեան հիմնադիր համարւում է Աշոտ Աղորմանի կրտսեր որդի Գուրգէնը կամ Կորիկէ Շ. որ հօր մահից յետով ժառանգեց Յաշիրը, Կայեան, Կայծոն, Խոշունի, Խոռակերտ, Բաղկերտ և ուրիշ անուանի բերդեր։ Մինչդեռ իւր աւագ եղբացը Սմբատ Բ. թագաւորում էր Անիում, սա իրեն թագաւոր հրատարակեց (982թ.) և սկսեց առանձին դրամ կտրել, որոնցից մի հատ Խուդաբաշեվը նույիրել է Պետերբուրգի Ասիական թանդարանին, Այս դրամը առաջին անգամ նկարագրել է Մ. Բրոսասէն իւր «Monographie des monnaies d'Arménie», (S. Petersbozorg 1839). և յետով Անգլուան իւր «Numismatique générale de l'Arménie» (Paris 1859թ.) աշխատութեանց մէջ։ Սա պղնձից է, առաջ ն երեսում տեսնելում է Ցիսուս Պրիստոսի անդրին, ամբողջ դէմքով, զլիսի շուրջը ճանանչ և ձեռին մի զիրք՝ հուանաւ կանորէն՝ Եւեստաբանը բռնած. զլիսի երկու կողմում ՅՅ ՔՅ է դրուած, վերև կրճատման պատիւ։ Միւս երեսում որոշ կարդացւում է միայն

+ ՏՐ ԱԴ

ՆԻ ԿՈՐԻԿ

Ի ԿՈՐԱ...

Ա...


այսինքն Տէր օդնեա Կորիկի կոր..ա ..

Բրոսասէ, այս դրամը Կորիկի առաջինին է համարում, որտիհետեւ «օրա ձեւ միանդամայն յիշեցնում է Թամարի հայր Գևորգիի և Գի-

որդի կաշա վրաց թագաւորների դրամի ձևը<sup>1)</sup>: Բայցի սրանից այս Կորինին սույն հարստութեան ամենազօրենցը լինելով, կարելի էր աւելի հեշտութեամբ նրան վերագրելու<sup>2)</sup>:

Բայց Լանգուան նմանութիւն գտնելով Ընտիռի խաչակիր իշխանների դրամների վերտառութեան (Եղոնդե) հետ, վերագրում է Կիւրիկէ IV-ին<sup>3)</sup>:

Մենք Բյոսսէի կարծիքը աւելի հաւանական ենք համարում, որպինուեւ որքան զօրեղ էր Կիւրիկէ Ա. այնքան թոյ և անհշան էր Կիւրիկէ: Դ որ հայածուած Գուրդարից, ապրում էր Մածնաբերդուամ:



Գուրդենը մեռաւ 989 թուին և թողեց երկու որդի՝ Դաւիթ և Սմբատ: Դաւիթը, որ Ընհող կոչուեց, ընդարձակեց խր երկրի տահմանները Գուրդարքումն ու Վրաստանում և Շամշուլլէն մայրաքաղաքը դարձրեց: Նա նուանեց նաև Դմանեաց քաղաքը<sup>4)</sup> և հպատակեցրեց Թիֆլիսի ամիրացին:

Այս ժամանակ (990 թ.) Գանձակի Փալտուն ամիրան յարձակուց Դաւթի վրաց, բայց ջարդուեց և հայիւ հազ կարողացաւ ապատուել<sup>5)</sup>: Հենց այս միջոցին մի հազ նախարար, որ տիրում էր Գաղ (Ղաղախում) բնորդին, դաւանանեց Դաւթին, հպատակուեց Վրաց թագավորին, երկրորդ անգամ մկրտուեց յունական ծիսակատարութեամբ և անուանուեց Դիմիտրի: Ես հաւատափոխութեան սպատճառով նա Վրաց կողմից կառավարիչ (մամփուղ - արքայիկ) կ. բգուեց Գաղում, Շիշ ժամանակ Դաւթիթը յարձակուեց Դիմիտրիի վրաց և խղեց նրանից բերդը: Դիմիտրին փախաւ և այս պարտութիւնից յետոյ երկար չափրեց:

Ելապէս գօրանալով Դաւթիթը Ընհողը 1091 թուին իրեն անկախ հրատարակեց հայոց Գաղիկ թագաւորից: Ես պատճառով Գաղիկը

<sup>1)</sup> Ma Numismatique de la Géorgie երես 19 և 25.

<sup>2)</sup> Յիշ. գիրքը՝ եր. 33.

<sup>3)</sup> Յիշ. գ. եր. 29.

<sup>4)</sup> Զամշեան թ. 873.

<sup>5)</sup> Ըստիկ 156—157.

յարձակուեց Դաւթի երկրի վրայ, մտաւ Տաշիր, և երեք ամսուայ ընթացքում քարուքանդ արաւ Դաւթի երկրները, մինչև որ Աղուանից Սարգիս կաթուղիկոսը միջամտելով կարողացաւ հաշտեցնել և Դաւթին նորից հպատակեցրեց Գագկին, Բաց երբ 1020 թուին մեռաւ Գագիկ Ջահնշահ թագաւորը կտակելով իւր Յովհաննէս Սմբատ որդուն թագաւորական գահի և շատ երկրների հետ նաև Կայեան, Կայծոն բերդերը և Սեորդեաց Տաւուշ գաւառը<sup>1)</sup>, Դաւթի Անհողը նորից զէնք վերցրեց, և օգտուելով հանգամանքից, որ Յովհաննէս-Սմբատի թուլութեան պատճառով նրա եղբայր Աշոտն էլ թագ էր կապել Կարսում և այս պատճառով սկսուել էր ազգամիջեան պատերազմ՝ օրից որ զօրացաւ և ընդարձակեց իւր երկրի սահմանները դէպի Ռւտէացւոց և Աղուանից աշխարհները, որի պատճառով և վերակոչուեց Աղուանից թագաւոր, պահպաններով իրը մայրաքաղաք դարձեալ Ջամշուլտէն:

Դաւթի Անհողը վերանորոգեց շատ բերդեր ու ամրոցներ. կառուցեց տասններկու նոր բերդ: Ճիննեց կամ վերաշինեց Լոռի քաղաքը Տաշիրում և կառավարիչ կարգեց իւր որդի Գուրգէնին, որ Ասորիկի: կամ Կիւրիկիէ էլ էր կոչում: Եյս միջոցներում Դաւթի Անհողը խընամացաւ Դուինի ամիրայ Արուսուարի հետ, (որ ազգով պարսիկ էր), տալով նրան իւր քոյզը: Յրուսուարը շատ նախանձու աչքով էր նայում Դաւթի այսպէս գօրանալու վրայ, ուստի և ծածուկ դաշն կապելով Պարսից գահի վրայ նոր հաստատուած Տուղրիլի հետ, հաւաքեց մինչև 150,000 զօրք և 1036 թուին մտաւ Աղուանք և հետզետէ շարժուեց դէպի արևմուտք: Թէև շատ քաղաքներ հպատակեցան այս ամիրացին, բաց ամէն տեղ եկեղեցիները քանդու եցան, քրիստոնէական սրբութիւնները ծաղրի առարկայ դարձան և շատերը զլիսատուեցան հաւատի համար: Դաւթի միայն տասն հազար զօրք ունէր, ուստի և չհա նարձակուելով միայնակ պատերազմ սկսել, օգնութիւն խնդրեց հայոց, Արխազների և Կապանի թագաւորներից, ինչպէս և Աղուանից Տէր Յովսէփ գ. կաթուղիկոսից: Յովհաննէս թագաւորն ուղարկեց 3000, Դարբանդի Սենեքերիմ թագաւորը՝ 2000, և Ծբխազների թագաւորը՝ 4000 զինուոր, որ Գուգարքի զօրքի հետ կազմեց 19000:

Բացի դրանից Դաւթի դիմեց Գուգարքի նշանաւոր վանքերին, և նրա մօտ հաւաքուեցան վարդապետներ և քահանաներ՝ լսաչուով, լսազառուով: Հոգեորականութեան ներկայութիւնը և նրա երգեցողութիւնն ոգեորեցին Դաւթի զօրքին և հէնց առաջին կուռմ Արուսուարի զօրքը ջարդուեց և ցրուեց: Հինգ օր շարունակ

1) Վարդ, Բաբձ, եր. 92:

հայերը հետևեցին թշնամիններին և յետոյ նրանց թողած ահազին առարը Դաւիթը բաժանեց գօրքին և հոգևորականութեանը<sup>1)</sup>:

1039 թուին մեռան Հայոց թագաւոր Յովհաննէս և նրա եղբայր Աշոտը, երկիրն երկու տարի մնաց առանց թագակրի: Դաւիթ Անհողը՝ իւր առաջին յաջողութիւններով՝ հպարտացած, խիզախնեց իրեն ամբողջ Հայաստանի թագաւոր հրատարակել և տիրել նրան: Երկու անդամ նաև մտաւ Ջիրակ, հակառակորդներին սրից անցկացրեց, բայց երկու անդամին էլ նախարարները միացեալ ուժով ստիպեցին նրան վերադառնալ իւր թագաւորութիւնը՝ Դուգարք:

Բայց երբ Գագիկ Բ. դաւաճանութեամբ Կ. Պօլիս հրաւիրուեց, ուր նրան առաջարկեցին Յովհաննէս թագաւորի կոտակի համեմատ Անին Ցոյներին յանձնել, Հայոց նախարարներն երկու կուսակցութեան բաժանուեցան. մինչ ցանկանում էր Անին Ցոյներին յանձնել, միւսը՝ հրաւիրել Դաւիթ Անհողին՝ տիրելու նրան: Առաջին կուսակցութիւնն աւելի զօրեղ եղաւ և Ցոյները հրաւիրուեցին Հայաստան 1046 թուին<sup>2)</sup>: Նոյն տարին էլ մեռաւ Դաւիթ Անհողին թագաւորը և թաղուեց Սանահնի վանքի բակում: Դաւիթ Անհողին յաջորդեց որդին՝ Կիւրիկին Բ. Սա իւր մաշտաբաղաքը Զամշուլդէից փոխադրեց իրեն սիրելի Լուի քարաքը:

Սորա ժամանակ, 1063 թուին պարսից թագաւոր Ալփասլանն ասիական բոլոր ցեղերից հաւաքած ահազին գօրքով մտաւ Աղուանք և բնակիչներին սրի ճարակ դարձրեց. ապա պատգամաւոր ուղարկեց Կիւրիկի մօտ, Լուի, և խնդրեց նրա դստեր ձեռքը, սպառնալով՝ որ եթէ մերժէ՝ կարչաւի նրա երկիրը: Կիւրիկի թագաւորն ստիպուած տուեց նրան իւր աղջիկը և նրա հետ դաշն կապեց: Ռիփալան ազատ թողնելով Կիւրիկի երկրները, մտաւ Դուգարքի Քաւախսք դաւառը, առաւ Ախալքալաքն ու Զամշուլդէին<sup>3)</sup>:

1082 թուին Կիւրիկի թագաւորը արևելեան Հայաստանի հայերի լոնդրով հրաւիրեց Աղուանից Մտեփաննու կաթուղիկոսին Հայքատ և Հայոց կաթուղիկոս օծել տուեց Անիի առաջնորդ Բարսեղ Եպիսկոպոսին: Ցեռոյ այս նորընտիր կաթուղիկոսի հետ ացելութեան դնաց Պարսից Մելիքքան շահին՝ Խորասան, ուր մեծ պատուի ընդունուեց<sup>4)</sup>: Վերադառնալով իւր երկիրը՝ Կիւրիկի թագաւորը շարունակեց ջանք

<sup>1)</sup> Մ. Աւուայիցի, 92—93 և Ամբատ սպար, 37—38.

<sup>2)</sup> Վարդան Բարձրբերաց ցին առանց բացատրելու, թէ ինչպէս Բնի, Կայեան և Կայձօն բերդերը անցել էին Դրիվոր Մայխատրոսին, առում է թէ նա տուեց սրանք Յունաց Մոնամախս կայսրին և սրանց վոխարէն առաւ Միջագետքի դքսութիւնը: Եր. 99.

<sup>3)</sup> Վարդ. Բարձր. Եր. 10<sup>1</sup>.

<sup>4)</sup> Կիր. Եր. 55; Վարդ. 102, 104. Մաթիթ. Այր. 60. Չամչ. Գ. 7,

թափել պահպանելու իւր սահմանները վրացիներից, որոնք օրից օր գօրանում էին <sup>1)</sup>):

Կիւրիկին մեռաւ և թաղուեց Հաղբատի վանքում նա թողից երկու որդի՝ Ծբաս և Դաւիթ, ինչպէս և երեք դուստր՝ Մարիամ, Ռուտուղան և Բաւրինայ, որոնք շինել են Սանահնի վանքի գաւթի երեք սիները:

Կիւրիկիէ Բ.-ից յետոյ սկսեց թաղաւորել Ծբասը, որի ժամանակ, 1105 թուին, Սկիւթացի Ղզիլ ամիրան ինքնակամ յարձակուեց Գուգարքի թագաւորութեան վրաց, առաւ Լօռին, Հաղբատն ու Սանահնին, գնաց մտաւ Դուին և սպանեց Ծբունասրին: Ես միջոցին վերջինիս եղբայր Մանուչէն, զօրք ստանալով Պարսից արքունիքից, եկաւ սպանեց Ղզիլին իւր եղբօր՝ Ծբունասրի ղերեղմանի վրաց և Դուինը յահճնեց պարսիկներին <sup>2)</sup>):

Սակայն Մանուչէի այս յաղթութիւնը չփրիեց Կիւրիկեան թագաւորութիւնը, որովհեաւ վրաց Դաւիթ թաղաւորը գօրանալով, խեց պարսիկներից Թիվիլսը, և յետոյ Հայերի մեռնուութեամբ առաւ Ապրուտար ամիրացից Ընին և աւելի ընդարձակելով իւր սահմանները՝ 1118 թուին ամիրեց նաև Կայեան, Կայծոն, Լօռի, Տաշիր և ամրող Կիւրիկեան թագաւորութեան երկիրներին <sup>3)</sup>։ Այսան ու Դաւիթը գնացին ևառ տեաշուն Մանայց (Թերևս Սուանայ, Եղուանք), և առան մի մի բերդ, (այն է Տաւուշ և Մածնարերդ) և այնուեղ աղրում էին տառապանքով <sup>4)</sup>: Կարճ միջոցից Տաւուշն ընկաւ Պարսից ձեռը և Ծբասը վերաբնակուեց Մածնարերդում, իւր եղբայր Դաւիթի մօտ: Ես երկուսի կանայքն էլ, Մամբան և Ռուղուղան, դարձան կրօնաւոր <sup>5)</sup>:

Ծբաս թագաւորն ու իւր եղբայր Դաւիթը մեռան և թագուեցան Հաղբատի վանքում: Ծբաս որդի չուներ, ուստի և նրան յաջորդեց Դաւիթի որդին՝ Կիւրիկէ Գ.-ը, մի շատ բարեբարչ և առարինի անձնաւորութիւնն Սա առանց մի միշտառի արժանի դործ կատարելու մեռաւ և իշխանութիւնը թողեց իւր վորքահասակ Երաս Բ. որդուն: Ծբասը չափահատ դառնալով ամուսնացաւ Զաքարէ, սպասալարի քոյր նախացի հետ, սակայն երկու տարուց յետոյ վախճանուեց: Եցրի Նախա թագուհին ի միշտառի իւր այդ վաղանեռիկ ամուսնուն, շինեց Սանահնի կամուրջը Զորագետի վրայ:

1) Կիրակ. Դանձ. Եր. 89:

2) Կիրակ. Դանձ. Եր. 59. Վարդ. Բարձ. Եր. 113. Միակիթ. Ելլ. Եր. 61. Սամուել Ան եցի Եր. 121.

3) Brosset: Hist. de la Géorgie I. 350. Վարդ. Բարձ. 119. Մատիք. Աւուն. 427—428 և 438—439

4) Վարդ. Բարձ. Եր. 106.

5) Վարդ. Բարձ. Եր. 90.

Սբասր թողեց միայն մի ապօրինի որդի, որին նրա քոյր Բիւրինան առան իւր մօտ և գաստիարակեց. Սա, որ կոչում էր Աղսարթան, մեծանալով դարձաւ աստուածաղաշտ ու քահանաւասէրցաւ Եւ երբ նա ժառանգեց Մածնաբերդը, Նոր բերդի Դաւիթ իշխանը հաղբատունեաց ազդից լինելով չփամեցաւ որ Աղսարթանը, որպէս ապօրինի որդի, ժառանգէ Մածնաբերդը, ուստի և խարէութեամբ ամուսնացրեց նրան իւր դստեր հետ և ինքը տիրեց Մածնաբերդին, որից յետոյ հանեց իւր աղջիկը նրա մօտից: Այս պատճառով Աղսարթան իւր կողմը դրաւց բնրդի բնակիչներին, որոնք յանկարծակի յարձակուեցին Դաւիթի վրայ, և ամբողջ ընտանիքով դուրս հանեցին բերդից, և վերջինն յանձնեցին Աղսարթանին<sup>1)</sup>: Մի ժամանակից յետոյ Աղսարթան իշխանութիւնը թողեց իւր որդի Կիւրիկէ Դ. Ին և ինքը կրօնաւոր դարձաւ. Դիտակիցք վանքում<sup>2)</sup>, Կիւրիկէ Դ. պաշտպանեց իւր Մածնաբերդը թաթարաց արշաւանքից, կրուելով Մօլարնուի դէմ<sup>3)</sup>: Նա թողեց երեք որդի՝ Բահլաւան, Թաղիաղին և Աղսարթան, որնց մասին այս միայն յայտնի է, որ Թաղիաղինը թաթարաց հուլազու խանի հետ 1257 թ. դնաց Սորեեասան պատերազմելու:<sup>4)</sup> Տայտնի է նաև, որ նա կինդանի էր ղեռ. 1296 թ.<sup>5)</sup>.

Այսպէս ուրեմն, Կիւրիկեան թագաւորութիւնն սկսուեց 982 թուին Եշտ Աղորմածի որդի Գուրգէն համ Կիւրիկէ Առաջնով և տեսեց երկուս ու կէս դարից աւելի մինչև Կիւրիկէ Դ. մահը, որ հաւանականօրին տեղի է ունեցել 1250 թուից յետոյ<sup>6)</sup>:

<sup>1)</sup> Կիրակ. Գանձ. եր. 89—90.

<sup>2)</sup> Վարդ. 90.

<sup>3)</sup> Կիր. Գանձ. 142.

<sup>4)</sup> Զայշեան. Գ. եր. 257.

<sup>5)</sup> Mon. des monnaies arméniennes p. 33.

<sup>6)</sup> Բրասեն համեմատելով Կախութիայի և Աղուանից Կիւրիկեան թագաւորութիւնների անունների ցանկը՝ շատ մեծ նմանութիւն է: Կտում նրանց մէջ և նոյն խոկ կարծում է, թէ մինչ ը արտազրած է միստից: Հպատակացնուամ է. Եթէ հարկաւոր է ասել, ինչոր ես մտսւում եմ, ես խոր համոզուած եմ, որ Կախութիան աւելի շաւ հայէրին է պատկանել, քան վրացիներին: Մինչ տեսնում ենք, որ բա Սորաբոնի, Կուրը բաժանում էր Խերիւան Աղուանքից և ոչ մի վրացական լուրջ վկայութիւն չկայ, որ Կախութի վրացիներին պատկանէր թիվ. դարից առաջ, և բացի սրանից, Վախուշար և Վախոսանքը պատմում են, որ Անրէթի (Կախութի մի մասն) իշխան Եգարնազի ժամանակ այս երկրը թողեց հայոց կրօն ը վրացականն ընդ եւնելու Ծրդ. քանի որ յայտնի է այս երկու ազգերի փոխադաշտ ատելութիւնը, չի կարելի կարծել, որ վրացի իշխանները մի քանի հարիւր տարի շարունակ մնացել են հաւատարիմ հայոց կրօնին: Աս հակառակ տիւն կրվնէր, Արքմն պէտք է հայոց մատենագիրների հետ ընդունել, որ այս աղուանական հարատութիւնը հայկական ծագւմն է ունեցել: (Brosset. Mon. des monnaies

Ազսքան ժամանակամիջոցում միմեանց յաջորդել են ութ թագաւորներ, որոնք բնակուել են Օամշովդէ, Լոռի, Տառշաշ և Մածնաբերդ բերդերում և որոնց յաջորդութիւնը եղած է հետևեալ կարդով. —

**Գուրգէն կամ Կորիկէ Ռ. 982—1089**

**Դաւիթ Սնհող 989—1046**

**Կիւրիկէ Բ. կ. Թամար + 1032-ից յետոյ**

**Երաս Ռ. + 1118 յետոյ. Դաւիթ. Մարիամ. Թուսուղան. Բաւրինա.**

**Կիւրիկէ Դ.**

**Երաս Բ. կ. Նանա. + 1234.**

**Աղսարիթան.**

**Կիւրիկէ Դ. կ. Թամար. + 1250 յետոյ**

**Բահլաւան. Թաղիադին + 1296. Աղսարիթան.**

Կիւրիկեան թագաւորութեան անկման միջոցին նշանաւոր դարձաւ Սպասալարների տոմուր, որ քաղաքական մեծ դեր կատարեց:

արտօնութեան պահպանութեան աստիճանի հետաքրքրական հարցը, մենք շեշտում ենք, որ անհրաժեշտ է մանրամասնորւն ուսումնասիրել Կախեթը, հաւաքնի արձանադրութիւնները, աւանդութիւնները, որոնց շնորհիւ միայն հնարաւոր կը լինի լուծել վերոյիշեալ ինդիրը: